



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆՆԻԱՅ

ቃሀገሁቶሁካ ለኔ ቶህኒ ህሀኮቶህካህኒ ቴኮ ህቡቴኮያቶህካህኒ

ՔՄԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ጊሆተ-ቱሪተሊ ጊሊዮሊፅ 130ፑሊትሆት 1861

652

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՈՒՄԸ • 1 ՅՈՒԼԻՍԻ

Գաղղիւնն պաշտօնական կերպիւ ճանչցաւ ի ընդունեցաւ զՍ իբթօր Իմանուէլ Թադաւորու իբրեւ վեհապետ Իտալիոյ Թադաւորութեանն ։

Սնկիեօր օրագիրը այս լուրը հրատարակելով կը յաւելուէ, թէ Գաղղիոյ կառավարութիւնն իմաց տուաւ Իտալիոյ մէրութեանը թէ ինքն չկրնար իւր վրան համեալքստութիւն մը անուով Իտալիոյ կառավարութեան այնպիսի ձեռնարկութեանց մէջ, որոնք Լաւրոպայի խաղաղութիւն խռովելու պատշաճ կրնան տալ ։ Միանգամայն իմացուց թէ գաղղիացի զօրքը պիտի մնան Լաւրոպի մէջ մինչեւ որ այն օգուտսները՝ զորս անմիջապէս պահելու համար եկած են, քառական երաշխաւորութիւններով պաշտպանուին ։

Անցեալ ամսոյ 9ին Վ. Էրթոր Լ. մահանուէլ թա-
գաւորը բաղում տիրով ընկալաւ զպատգամաւո-
րութիւնը, որուն յանձնուած էր Հռոմայեցւո-
ղէրծը Նորին Վ. Եհափառութեանը մատուցա-
նել: Այս պատգամաւորութիւնը բաղկացեալ
էր Վ. լլվէսթըլլէ իշխանէն, Վ. ֆորցա Չէզարի
նի դըսէն և Լորէնցինի կոմսէն: Թագաւորը
հռովեական խնդրոյն վրայօք պատասխանելով
ըսաւ թէ Խտալոյ միաւորութիւնը չկրնար կա-
տորեալ ըլլալ մինչև որ Հռոմ անոր մայրաքա-
ղաքը չըլլայ: Նորին Վ. Եհափառութիւնը յաւել-
ցուց թէ այս խնդիրը շուտով պիտի լմննայ
Սահայն ՚ի մասին Վ. Էնէտիկի խնդրոյն յայտնա-
պէս զրուցեց, թէ առանց պատերազմի պիտի
չկրնայ ըւծուիլ և կարգադրուիլ:

Դուրիճի բարձրմանը իւր անգամայ խիստ մեծագոյն մասին հաճութեամբ ընդունեցաւ օրինաց այն առաջարկութիւնը, որով բոլոր Իտալիայ (Սպարտեան նահանգաց, Էմիլիայ նահանգաց, Դուրիճայի, Երկուց Սիկիլիայից եւ Սարտենիոյ) այժմեան ազգային պարտքը պիտի միաւորուին և պիտի կոչուին Պարտք Իտալիոյ թագաւորութեան : Այս պարտուց գումարը 2000 միլիոն ֆրանքէն աւելի է . որոց մէկը

和和和和和和和和和和

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Հ. Ն. Ո. Ի. Թ. Ի. Կ.՝

Յաղագս Հայոց զուրբ Աստուածն խաչեցարիւ ասելոյ

Հայր Միքայէլ Զամենան 'ի պատմութեանն տէր
 Առնաւորայ Հայոց կաթողիկոսի զրէ պատգամ, «Գտաւ
 նին և բանք ինչ Հարցաբնուութեան զորմէ առի թէ
 արարեալ իցէ սար (Առնաւորայ), բայց այն կամ
 յայլոց է կեղծեալ, և կամ բաղմբ պլայլայն, զի
 լի է աղիտաբանութեամբ»։ (1) Ի ձեռագիր մատենին
 ինչ (2) զտեալ զնորս բանն Հարց և պատասխանայ
 ընդ Լաւրիտոսի պատրիարքի Առնաւորեանապօլսոյ, չգտի
 'ի նմո զբանս աղիտաբանութեան, որպէս վկայէր
 Հայր Միքայէլ։ Թերեւս առաջի դատողութեան պա-
 տախանաց, ամենայն բանք որք չիցեն ստրկացեալ
 զահին Հոռովմայ Համարին աղիտաբանութիւնք։

Դնոյն հարց և պատասխանական բանիցն . Էս մի-
այն զԵՐԿՈՒԹԻՆ որ յաղաղ և խաչեյարիւ ասեւ ըն Հայոց

*Այս յօդուածը Նորչուղային յուղարկեցաւ մեզ 'ի հրատարակութիւն :

(1) Հայոց Պատմ. Չափ. Հատ. ք. ԿԳ 525:

(2) Այն ձեռագիրը մատենան պահելի չի գրքատան սրբոյ Ամենափրկչեան վանաց . բոլորագիր տառեր գրեալ չի վերայ կարծր բլրոյ , որոյ բռնականն է (2ԹԱ) 741 :

յաւելցնելու է 650 միլիոն. զորս Իտալիոյ՝ Կառաֆորութիւնը փոխ սլիտի առնուաւ տէրութեան հարկաւ որ ծախքը հոգալու համար :

Հռոմէն հասած վերջին լուրերը կրճանուցա
նեն թէ սրբազան Պապին առողջութիւնը խիստ
վրանգաւոր կաշուութեան մը մէջ կրգտնուի :

Հունգարիայի ազգային բարձրմենթը այնպիսի ուղերձ մը քոչեց և յուզարկեց 'ի Վէննա, որ Վստրիոյ կայսրը անշուշտ հաճելի պատասխան մը պիտի չտայ և գուցէ պիտի պարտաւորի լուծել Վէնթի ազգային երեսփոխանաց ժողովը, կամ ուրիշ աղբու միջոցներ պիտի գործածէ, ժողովուրդեան չափազանց ազգասիրութիւնը զսպելու համար ։ Կըհաստատեն թէ Վստրիոյ կառավարութիւնը արդէն հարկաւոր եղած հրամանները սուեր է որպէսզի բաղմամբիւ շօրք ժողովուն Հունգարիայի մէջ ։

Վատրիոյ կայսրուհին, որ կուրծքի հիւան-
ւանդութիւն ունի, Վորջու կղզին գնաց օդա-
փոխութեան համար եւ ձմեռը Եգիպտոսի մայ-
րաքաղաքը Ղահիրէ պիտի երթայ, կրսեն ։

Ո՛րք ինչ Բրիտանիոյ մէջ նշանակութեան արժանի երեւելի դէպք մը չկայ : Բորի կոչուած հզօր կուսակցութիւնը ; որուն գլուխը լորտ Տէրպլին է , թէպէտեւ խորհրդակցեցան ծանր կերպիւր ընդդիմութիւն ընել կառավարութեան քաղաքական ընթացքին , սակայն աղէկ դիտնելով որ , եթէ լորտ Բէլմընթըն՝ որ այժմեան պաշտօնէից ժողովին նախագահն է , հրաժարուելու ըլլայ , անոր տեղը արժանաւորութեամբ բռնող դժուարաւ պիտի գտնուի կամ պիտի չգտնուի , անոր համար ազգին օգտիցը վնասակոր համարեցին այս պարագայիս մէջ դիմադրութիւնն էլ կառավարութեան ընթացքին , իշխանութիւնը անոր ձեռքէն սահմանադրապէս առնելու համար :

Մաղղիոյ մէջ ևս քաղաքականութիւնը հան-
դարտ վիճակի մէջ կը գտնուի : Այն հասփառ Մա-
րտէան կայսրը Վիշի-ը գազաճ պիտի ըլլայ այժմ

սուրբ Աստուածն, նշանակելով աստուծո՛ր 'ի տեղեկու-
թիւն համազգեաց : “Իսկ մեր որ ղիսէնցարն ասեմք
ոչ յանձնել” այլ 'ի ձերոց զրոց եմք ուսեալ, որպէս
և գրէր Ներսարիոս հովմայեցին, թէ չեղև հնար
Յովսէփու զմարմինն ի յուցանել 'ի խաչէն, յորժամ
ըլեւեռսն հանէր . զի փայլատակունք 'ի փորուածս
բեւեռացն հատանելին . ապա զձեռսն 'ի վեր համբար-
ձեալ տարածանելով աղաղակեաց այսպէս անելով .
սուրբ Աստուած, սուրբ և հօօր, օուրբ և անմահ որ
նաէնցար վասն մեր ողորմեա մեզ : Երիցո անգամ զայս
ասացեալ ըմբռնեալ ի յոյց 'ի խաչէն և պատեալ եդ-
ի գերեզմանի : Իսկ յԱռաքելոցն ժամանակս յառու-
րքերքաբաթու և ուրբաթու 'ի ժամ պատարադին
սկսեալ նախ զայս ասելին կցրդիւ և ապա զղիբն ըն-
թեռնուին, և պատարադ մատչէր : Բայց որպէս ա-
սացին . ոչ եթէ օրէնս եդին . այլ ըստ աւուրց և
խմուց հանդիպմանց որպէս զմարդարէի և սպասա-
որի Վրիստոսի՝ պատիւ արարեալ կարգեցին յեկե-
ղեցի Աստուծոյ(3) : Իսկ 'ի փոխելն Աստուածածնի
Դահլամք՝ եդեալ 'ի գերեզմանի» . և յետ երից

(5) Մբորաբին ինչ 'ի բանս դոյն յօդուածոյ տեսանիւր ըստ իմ դատման, աչսկես պարզաբանել կամ մեկնաբանել՝ յարմարութիւն տալ իմաստիցն : Յետ յայտնելոյ բէ գտորբ Աստուածն խաչեցարիւ ասել սկզբնաւորեցաւ. 'ի սբբոյն Յովսէփայ, զոր էս Առաքեալքն առնին, յաւելու ժամօթութիւն տալ, բէ զայն ասելն

ուր հանքային ջուրերը պիտի մտնէ : որ շատ ա՛-
ռողջարար են : Սէկ ամսուան համար շատ գե-
ղեցիկ և մեծ տուն մը բռնեցին ընդարձակ
պարտեզով : 60 հազար ֆրանք վարձք վճարելով
ամսուան մը համար :

Նաբոլեն, իշխանը՝ իւր լծակցաւ Ուկայիր
հասած տիտի ըլլայ այժմ։ Ուկայիր չգացած
Թունուղ հանպիպեցաւ․ ուր գրեթէ երեք օր
մնալով՝ մեծ յարգանք ու մարգասիրութիւն
տեսաւ Թունուղի Պէլէն։

Գաղղիոյ օրէնսդրական խորհրդանոցը անցեալ
ամսոյ 15—27ին գոյուեցաւ և աղգային երես-
փոխանները իրարմէ զատուեցան և մեկնեցան,
կեցցէ՛ կայսրը աղաղակելով։

Ամերիկայէն հառած լուրերը կրճանուցանեն,
Թէ Սիացեալ Նահանգներէն զատուիլ ուղղով
հարաւային վիճակները շուտով պիտի յաղթուին
և պիտի զոպուին . ըստորում բաւական դրամ
և բաւական զինուոր չունին . այն ինչ հիւսիս
սային նահանգները Թէ դրամով և Թէ զորօք
չատ հօր են և քանի մը յաղթութիւններ ար-
դէն բրած են :

(Չգտնողական Այտուհի-Աղիւ Սուբմանը,
կայսերական գահը ելելէն ետեւ, հետեւեալ արեւ
քունի հրովորտակը (խաթիւի հիւսանուն) հրաւ
տարակեց . որ անցեալ ամսոյ 19ին մեծ հանդիւ
սիւ կարդացուեցաւ Բարձրագոյն Ղուռը .

Իմ մեծաշուք Վեգիրս Մեհեմմետ Էմին փաշա .

Տիեզերաց գերագույն Տեառն յառիտեակալան վճռոյն համեմատ իմ փառաւոր՝ նախնեաց կայսերական աթոռը ելլելով եւ ձեր հաւատարմութեան ու խոհեմութեան ապացոյցները տեսած Ելլալովս , վերահաստատեցի զձեզ մեծ Վեզիրութեան բարձր պաշտօնին մեշնմանապէս վերահաստատեցի իրենց պաշտօններուն մեզ՝ իմ տերութեանս միւս նախարարները :

Կուգեմ որ ամեն մարդ գիտնայ թե իմ ամենեկն մեծ բաղձանքս ուրիշ բան չէ բաց միայն , ողորմութեամբն Աստուծոյ , աւելցնել տերութեանս բարեխատուրիւնը եւ զբարօրութիւնը իմ հպատակացս առանց խտրութեան : Նաեւ կուգեմ որ գիտնան թե կատարեալ կեր-

ստուգելով խնդիրն արարեալ 'ի գերեզմանին ե ոչ գը-
տին, ազա աղբ լեալ 'ի Հոգւոյն սրբոյ 'ի նոյն ա-
ւանքս Մարտիրոսի ե թաւմայի ասացեալ աղթս զոր
Մարտիրոս լուսեալեդին զհէտ աղթիցն Հիւսիսեփո-
սոսի է սուրբ Մատուածն, այսպէս, քառաւորեալ միշտ
սուրբ կոյս Մատուածածին մայր-Քրիստոսի մաստ զա-
ղաշանս Որդւոյ քո ե Մատուծոյ մերոյ: Եւ այսոքիկ
կայ 'ի դիրս Աւերդեանոսի հոռովայեցոյ, որ Կանո-
նաց լրմուռնքն կոչին: Եւ ասն յիշատակի եկեղեցւոյ
Մատուծոյ զտոյն բան գրէ Իւրեգինէս 'ի դիրս Չառ-
կացն, զոր ընթերցեալ Հոգնս Ոսկեբերան, կարգ-
եաց յիւրում ժամագրութեանն, զոր արդեւուին
Թեոփիլեանքն, եւ ասէին թէ գ'Իւրեգինէն խորհի,
եւ առժամանակս չնչ դադարէին բանքն: Եւ ապա
Կիրեւդ կարգեաց ընդդէմ 'Կեստորի 'ի ժողովն Եւ-
փեսոսի, միածին որդի եւ բանդ Մատուած եւ անմահ
հոռութիւն. որ յանձն առեր մարմնաւ 'ի սուրբ Աս-
տուածածնէն ե 'ի միշտ Կուսէն անփոփոխելի, մարդ-
եղեալ ե խաչեցար Քրիստոս Մատուած. մահումբ
զմահ կոխեցեր, մինդ. 'ի սրբոյ Երրորդութեանն,
փառաւորակից ընդ Հօր ե ընդ սրբոյ Հոգւոյն կեցո-
րբեւ. հարկ ինչ ոչ օրինադեցաւ, այլ ըստորում
ասացեալ 'ի սրբոյն Յովսէփայ, որոյ բանք իբրեւ
մարգարէի եւ սպասարի Քրիստոսի' էին. վասնորոյ
զայն տան յեկեղեցին Աստուծոյ կարգեցին Շրտ աւ-
ուրց եւ ժամուց հանդիպմանց":

պիւ վաւերացուցի բոլոր հիմնական օրէքները, որոնք մինչեւ ցայսօր հրատարակուեցան եւ հաստատուեցան յիշեալ բարեփոխութիւնը եւ բարօրութիւնը մեծ քերական համար եւ ապահովեցնելու համար իմ վիճակացս ամեն բնակչաց կեանքը, պատիւը եւ գլխաւոր իրենց ստացուածոց :

Մեր նուիրական օրէքը, որ նոյն իսկ արդարութիւնն է, միանգամայն մեր տերութեան հաստատութեան առանցքը եւ պայծառութեան հիմք ըլլալով, մեր օրինաց Աստուծային հրամանները կառաջնորդեն զմեզ փրկութեան շահին մէջ : Վասնորոյ իմ հաստատուն կամքս այն է, որ մեծ ուշադրութիւն մատուցուի օրինաց գործադրութեանը վերաբերեալ ամեն բաներուն :

Ամեն տերութեանց փառքին եւ բարօրութեան աւելնալը եւ հաստատուն մնալը ուրիշ բան կախում չունի բայց միայն ի հնազանդութենէ գոր իւրաքանչիւր կրօնականութիւն ունենալ հրատարակուած օրինացը : Տեսն կախում ունի ի փութաշան մտադրութենէ ամենուն, քէ մեծ է եղեր եւ քէ պզտիկ, ջանքանէ իրենց իրաւանց եւ պարտոց սահմաններէն : Անոնք որ այս ճամբուն մէջ պիտի քայլեն, բոլոր գիտնան քէ իմ կայսերական խնամոցս արժանի պիտի ըլլան : Իսկ անոնք որ պիտի խտտորին այս շուղին բոլոր հաստատի ըլլան քէ անպատիժ պիտի չմնան : Վճռաբար կըրճամայեմ բոլոր իւրամանքուն, նմանապէս տերութեան զանազան ծառայութեանց մէջ գտնուող պաշտօնատարաց եւ գործակալաց որ հոգ տանին իրենց պարտքը կատարեալ ուղղութեամբ եւ հաւատարմութեամբ կատարելու : Քանզի տերութեանց մէջ մեծ գործերը ուրիշ կերպիւ չեն կրնար յառաջ երթալ, բայց միայն Աստուծոյ օգնութեամբ եւ բարձրաստիճան նախարարաց ու գործակալաց իմպատուն ջանքովը եւ յարատեւութեամբ : Այս անփոփոխ հիմանը վրայ հաստատուն մնալով, այսինքն իւրաքանչիւր որ ջանք ուղղութեամբ եւ հաւատարմութեամբ ի գործ դնելով, տարակոյս չկայ քէ բարեկարգութիւնը եւ կանոնաւոր ընթացքը պիտի յառաջադիմեն մեր տերութեան ներքին եւ դրամական գործոց վարչութեանը մէջ : Իմ կողմանէ կայսերական խնամքս անպակաս եւ հսկողութիւնս անդադար պիտի ըլլայ այս գործոյն վրայ :

Իմ տերութեան զանազան պաշտօնատարները պարտաւորեալ են ամենայն ճշգրտութեամբ համաձայն վարուիլ այն փութաշան մտադրութեանը գոր մասնաւորապէս պիտի նուիրեմ այս բանին : Այսինքն Վերին Նախախնամութեան ողորմութեամբ վախճան մը տալու դրամական դժուարութեանց, որ զանազան պատճառներով ծագած են ժամանակէ մը ի վեր : Իմ պաշտօնէից ժողովը աղէկ գիտնալով քէ ի բոլոր սրտէ կըրփափագիմ վերահաստատել եւ աւելցնել տերութեան դրամական համարումը եւ իմ ժողովրդոց բարօրութիւնը, իմ պաշտօնէից ժողովը, կըսեմ, կը պարտաւորի ներկայացնել, ըստ ժամանակին, օրինաց առաջարկութիւններ, եւ բարեկարգութիւններ կատարեալ խնայողութիւն մի հաստատելու համար :

ագգային դրամոց հաւաքման եւ գործառնութեանը մէջ ազատ պահելով զանոնք ամեն խարդախութիւններէն : Իմ ցամաքի եւ ծովու կայսերական գործս, հաստատութեան սիւներն են կայսերութեան մեծութեանը, ուստի իմ կառավարութիւնս հոգ պիտի տանի անոնց բարեկարգութեանը վրայ, որոնց անհապաղ պիտի աշխատի անոնց բարեկարգութիւնը աւելցնելու ըստ ամենայն մասին եւ ամեն տեղ :

Կայսերական կառավարութիւնս պիտի ջանայ նաեւ հաստատուն պահել եւ օրրատօրէ եւս առաւել սեղմել զբարեկամական յարաբերութիւնները որ կան ի մէջ օսմանեան կայսերութեան եւ բարեկամ ու զաւնակից տերութեանց : որոց հետ եղած զաւնադրութեանց մեծ յարգութիւն պիտի մատուցուի միշտ եւ անփոփոխ :

Վերջապէս տերութեան վարչութեան ամեն ճիւղերուն մէջ, իւրաքանչիւր որ իւր ընթացքը պիտի յարմարցնէ նուիրական պարտոց արդարութեան, ամբօրութեան, փութոյն եւ հաւատարմութեան առ կայսրութիւնն, աղէկ գիտնալով քէ այս ճամբով մարդս կրնայ երջանկութեան եւ փրկութեան հասնիլ :

Ահա այսպէս են իմ կամքս եւ հրամաններս : որոցմէ ի գտն հարկ կըրճամարիմ յայտնել հրապարակաւ քէ իմ հպատակացս երջանկութեանը համար ունեցած բաղձաբքս ամենեւին խտրութիւն չընդունիր : այլ ընդհանրապէս իմ ժողովրդոցս մէջ գտնուող տարբեր կրօնի եւ տարբեր ցեղի վերաբերեալ ժողովուրդներն ալ միեւնոյն արդարութիւնը, միեւնոյն խնամքը եւ միեւնոյն յարատեւութիւնը պիտի տեսնեն իմ վրաս իրենց բարօրութիւնը ապահովեցնելու համար :

Արդիւնաւորութիւնը բնական հարուստ միջոցներուն գորս Աստուծոյ մէջ կայսերութեանը շնորհած է առաւելապէս : ճշմարիտ յառաջադիմութիւնը բարօրութեան որ պիտի ծագի այն արդիւնաւորութիւնէն ընդ հրվանադրութեամբ կայսերական գործութեանս եւ իմ մեծ տերութեանս անկախութիւնը, ասոնք ամենքը իմ անդադար մտածութեանց եւ իմ հոգատարութեանց նպատակը պիտի ըլլան :

Նոյն ինքն ողորմածն Աստուծոյ, որ գերազույց բաշխիչն է շնորհաց, պահպանէ զամենեւեանս զմեզ իւր հօգ օգտակարութեանը ներքէն :

ՀՈՒՓՈՒՄԵԱՆՅ ՎԱՐՈՒՄԱՆ ԶՄԻՌՆՈՒՄՈՅ

Նշեալ ամսոյ 15ին եւ 16ին Հռիփսիմեանց վարժարանին օրհորդաց հարցաքննութիւնը մասնաւոր կերպիւ կատարեցաւ ի ներկայութեան քաղաքիս հայկազուն ուսումնականաց եւ ուսումնասիրաց : Նշակերտութիւններ, որոնք յանպատրաստից հարցաքննութեան հայկաբանութեւ, աշխարհագրութեան, թուաբանութեան, Հայոց պատմութեան, քրիստոնէական վարդապետութեան եւ գաղղիներէն մէջ, գահացուցիչ պատմականներ տուին յարաբերութեամբ իրենց հասակին եւ իրենց ուսումնասիրական աշխատութեանց քիչ ժամանակին :

Յունիսի 18ին կիրակի օրը յիշեալ աշակեր

տութեանց տարեկան պարգևատրութեան հանդէսը կատարեցաւ : ուր հրաւիրուած էին օրհորդաց ծնողքը, նմանապէս ազգային երեւելիները եւ ուսումնականները : Այս պատուական հանդիսին մէջ, 60էն աւել յառաջագէտ օրհորդներ հայերէն եւ գաղղիներէն գլխաւորով վարժարանացան թէ իրենց ուսմանցը համար եւ թէ ձեռագործ արուստից մէջ ցուցուցած վարժարան եռանդուն համար : Նշակերտութեանց գրաւոր աշխատութեան, նմանապէս ասղանագործութեան վերաբերեալ փորձերն եւ կու մեծ գրասեղանի վրայ գրուած էին ի ցոյց հասարակութեան :

Պարգևատրութեան հանդէսը բացուեցաւ վարժարանի վրայ թեղեկագրական ծառիւ մը շուրջ (ուսումնական խորհրդոյն անդամներէն մէկը) յարգելի Մարտիրոս աղան Նշակերտեան, հաստատուն ձայնիւ կարգաց եւ զոր ի ստորեւ մեր ընթերցողաց աչաց առջեւ կըրննմը : Այս ծառը ընդնային ետեւ, քանի մը հայերէն արձակ եւ ստանաւոր ծառեր եւ քարեմաղթութիւններ կարգացուեցան յառաջագէտ աշակերտներէն : նմանապէս այս գասուն օրհորդներէն երկու հոգի երկու գաղղիներէն տեսնախօսութիւն կարգացին : Նշակերտը կը համարվէր զրուցելու թէ այս ամէն տեսնախօսութիւնները պարագայիս յարմար իմաստներով գրուած էին եւ ջերմեւաւոր բարեմաղթութիւններ կը պարունակէին վրան աղագային բարեբարոց եւ մասնաւորապէս վրան երկար կենաց եւ երջանկութեան Հռիփսիմեանց վարժարանին երկու վեմաւոր բարեբարութեանց, Նուստիքեան (Յունիսի տիկնոջ) կրօնքը եւ յատանգեան Հռիփսիմէ տիկնոջ :

Յունիսի 19ին երկուշաբթի օրը, որ սրբոց կուսանային Հռիփսիմեանց տօնախմբութիւնն էր, հանդիսաւոր պաշտօն եւ պատարագ մատուցեցաւ սուրբ Ստեփաննոսի եկեղեցին : որուն ներկայ գտնուեցան վարժարանի աշակերտութիւնը : Սուրբ պատարագը ընդնային ետեւ, պատարագիչ քահանան զգեստաւորեալ եւ ընկերութեամբ միւս քահանայից հոգեւոր հանդիսիւ եկաւ Հռիփսիմեանց վարժարանը : ուր Նշակերտեան մը կարգաւոր եւ պահպանիչ ընկերով մեկնեցաւ : Յետ այնորիկ, յառաջագէտ աշակերտութիւններ առջի օրուան պէս, վերստին կարգացին հայերէն եւ գաղղիներէն տեսնախօսութիւնները ի ներկայութեան քաղմաթիւն հայկազուն տիկնոց : որոնք իրենց սիրելի զաւակաց ամէն կերպ յառաջադիմութիւնները տեսնելով ուրախացան եւ շնորհակալ եղան :

Այս գեղեցիկ աղագային հանդէսը, որ ամէն տարի Հռիփսիմեանց տօնախմբութեան օրը կը կատարուի իշխման աղջկանց գաղղիցի մէջ մասնա

զմեղ

Հայրաւճ ձեռագիր մատենի եւս(4) սակս զտուրբ Բստուածն խաչեցար ասեւն, զոր զօրութեան զոր ի ստորեւ նշանակեցի : Սեծին վարդապետ վանաւ կանի հարց եւ պատասխանելու են նոյն բանք : որ ի զխաւար իմաստ յար եւ նման համաձայնի բանիցն, տէր Կրօնատապ : որով տարակուսական երկբայութիւնը յաղաղ ստուգապատում գործ բանիցն տեղի տուեալ եւ հեռացեալ ի միաբան գործ բանիցն երկուց արժանահաւատ վիշակիցն, ուղղափառութիւնն Հայաստանեայց սուրբ եւ առաքելական եկեղեցւոյն որպէս յայլ մասունս գաւառութեան նոյնապէս եւ յերկր այլմիկ իբրեւ ի վերայ աշտանակի լուսաւորեալ հանդիսանայ :

Իսկ վասն զտուրբ Բստուածն խաչեցար ասեւն, ի մեծէն իդնատիտ Բստուածադպեցէն եղաւ . . . եւ Յոհան Ոսկեբերան նոյնապէս կարգեաց ի Կոստանդնուպոլիս յաւուրն երկիցս ասեւն զխաչեցարն : Իսկ սուրբն Սիւրբ զարծեալ յիշատակ ժողով կարգեաց զմիաձին ժամանումն, եւ զտուրբ Բստուածն խաչեցար, եւ գրեաց այսպէս : Եսայի մարգարէն ըզ-

(4) Նոյն ձեռագիր մատենն նոյնպէս կայ ի գրքատան սրբոյ Ամենափրկչեան վանաց Նորջուղայոյ : Չունի բռնական եւ տառքն են բոլորագիր խորհրդի վերայ կարծր բոլոր : Ըստ իմ կարծեաց սա առաւել եւս հնագոյն է քան զմիւս ձեռագիր մատենն 741 բռնականի :

Քրիստոս ետես յաթոռ փառաց նստեալ որ էր խաչն եւ վիշակ Լեւտարանիչն Յոհաննէս որ ասէ զայս լուսաց Եսայի զի ետես զփառս նորա եւ խօսեցաւ վասն նորա : Վասնորոյ ասեմը պարծանք սուրբ Բստուած որդիւ միածին, սուրբ եւ հզոր որդիւ միածին, սուրբ եւ անմահ որդիւ միածին, որ խաչեցար վասն մեր ողորման մեզ, եւ այս է մեկնութիւնն : Թեպէտեւ հրեայն զերթ յանցաւոր մարդ սպանին ընդ չարազործն, սուրբ եւս Բստուած եւ ոչ մարդ սոսկ, թեպէտ տկարացար կամօք եւ ետուր զբեզ ի ձեռս խաչահանուացն, սուրբ եւս հզոր յամենայնի : Թեպէտ մեռար մարմնով եւ եղար ի դերեզմանի որպէս մահկանացու, սուրբ եւս եւ անմահ եւ կամաւ խաչեցար վասն մեր : արդ յիշեալ զերախտիս քո զոր մեզ արարեր մահուամբ, անպարտական մահու եւ նովին սիրով ողորմեա մեզ : Չէ եւ սրակ եւ պարծանք քրիստոնէից խաչն Քրիստոսի : որպէս ասէ Ստեփաննոս Հայեցաբար ի պատկն արքային զոր պատկեաց զնա յերուսաղէմ մայր իւր յաւուր ուրախութեան զորդի քո եւ զայր բարբառ յերկնից փառաւորեցից : Չիսալ եւ մահն ասէ փառք : եւ մի անգամ ասեմը զտուրբ Բստուած մեր հոգեւոր եւ մոաց եւ մարմնոյ ի մարմնութիւն եւ ի սահպանութիւն, եւ ինի կրկնելով թ. սուրբ ըստ իննեակ գասուց հրեշտակացն, եւ ըստ ինն գասուց եկեղեցւոյ : որ Բստուածաբանն միշտ զխաչեալն պաշտելով : Բայց

զառաջինն ի Յովսէփայ Յարեմաթացոյ սխաւ սուրբ Բստուածն որ զրէ Նիքեայիս հոգովայնից : Թէ չեղէ հնար զմարմնին ի խաչն ի ջուցանել, զի փայլաւորութիւնը հատանէին ի փորութեան բեռնացն եւ ոչ ժուէր : ասպ կայեալ ի բայեայ եւ ձեռս ի վեր պարզեալ ասաց սուրբ Բստուած : սուրբ եւ հզոր սուրբ եւ անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա, եւ զայս երկցս ասացեալ եւ կալեալ զբաղուս առաջի, էջ մարմնին Տեսուն ի վերայ ձեռացն Յովսէփայ : Իսկ զփառաւորեալն թուումս կարգեաց ասաբեալն : զինի փոխման Բստուածամօրն : Երբեք ասէ զայս Հեղինոս ի զիրան որ Կանոնաց Լուսնը կոչի, եւ որպէս ասացաւ, յետոյ զինի մոռացման ժամանակաց նորոգեցաւ դարձեալ յիշատակութեան, ի Յոհաննէս եւ ի Սիւրբ : Իսկ որ ի վերայ Երրորդութեան ասեմն փնաւ կայ ի նոյն բանն զի զհայր Բստուած ասեմն եւ ոչ հզոր եւ ոչ անմահ : եւ զորդի հզոր, եւ ոչ Բստուած եւ ոչ անմահ : եւ զհոգին անմահ եւ ոչ հզոր եւ ոչ Բստուած : Իսկ սա մեզ ամենն առ որդի է յայս առն եւ յայս տեղս : ասպ յայլ բաղում տեղիս զտուրբ սուրբ սուրբն Երրորդութեանն երկեմը, որ սուրբն հաւատար զայ եւ ի մի տեղութեան հաւաքի : Կամ փառք յաւիտեանս յաւիտեանի ամեն :

Ի Նորջուղայ, 10 յունուարի 1861 :

Յարութիւն թ. 4-րդ Յովսէփայն, Առնաղ պեր Զուղայոս սրբոյ Առնափրկչեան վանաց :

նաւորապէս կանանց յատկացեալ ընտրով, նոյն օրը էրէի մարդիկ չկային, Ուսումնական խորհրդէն մէկ երկու անդամներէն 'ի դատ:

ՃԵՌ

Ասացեալ 'ի հանդիսի պարգեաւաբաշխութեան օրինորդաց Հոփփսիմեանց վարժարանին:

Մեծարդոյ տեարը,

Ուսումնական ժողովը, որուն սահմանադրապէս յանձնուեցաւ քաղաքի սուրբ Մեսրոպեան և Հոփսիմեանց կրկին վարժարանաց վերանորոգութիւնը, պարտք կը համարէ իրեն՝ քանի մի հարկաւոր տեղէկուծիներ տալ Հոփսիմեանց դպրոցին վրայօք, որուն աշակերտութեան տարեկան պարգեաւաբաշխութեան հանգէսը կը կատարուի այսօր:

Յիշեալ ժողովը որոշեալ սրտիւ տեսաւ թէ ընդհանրապէս գոյութեան արժանի է աշակերտութեան ընդունակութիւնը ուսմանց մէջ և յաջողութիւնը ձեռագործ արուեստից համար. որոց փորձերը ահաւասիկ սեղանատախտակին վերայ դրուած են: Հարցաբանութեան ժամանակը, ուսումնական ժողովը հաւաստի եղաւ թէ աշակերտութեան յատկապէս դասերը բաւական տեղէկուծիւն ստացած են հայկաւանութեան, Հայոց պատմութեան, քաղաքական աշխարհագրութեան, քրիստոնէական վարդապետութեան և թուարանութեան վրայօք: Այսպէս գաղղիներէն ընդունին հետեւեղներն ևս, ըստ կարի արժանաւոր պատասխաններ տուին իրենց ուսմանցը մէջ: 'Իրութիւններն ևս, թէ՛ հայերէն և թէ՛ գաղղիներէն, աղեղ չեմք կրնար ըսել, մանաւանդ գոյութեան արժանի գրութիւններ ևս կը գտնուին, զորս ներսի գրասեղանին վրայ պիտի տեսնէք:

Գաղղիներէն մէջ աշակերտութեան քաղմութիւնը տեսնելով (քանզի 60 հոգի չափ կան որ գաղղիներէն դաս կ'առնուն), և անոնց մեծ եռանդեանը և յատկաբանութեանը ուշադրութիւն մատուցանելով՝ գաղղիացի վարժապետուհի մը յաւելցուցինք. որ նոյն ընդունին համար եղած վարժապետին օգնական ըլլալէ 'ի դատ, ասորնապարտութեան գլխաւոր հոգը և աշակերտութեան քարեկարգութեան ու հանգարտ նստելուն տեսչութիւնը անոր պիտի յանձնուի:

Այլևս գիտնալ արժան է որ Հոփսիմեանց վարժարանին աշակերտութիւնը երթալով շատցան և այսօրուան օրս 250 հոգի կը հասնին. որոց հայերէնին համար այժմ միայն չորս վարժապետ ունիմք որ շատ քիչ է. ուստի պարկեշտ և ամուսնացեալ անձ մը պատրաստած եմք, որպէսզի հայ վարժապետաց թիւը գոնէ հինգ ըլլայ:

Կը պարտաւորեմք նաև ծանուցանել թէ 26ի չափ շատ պղտիկ աղջիկներ, որոնք դայեակի կարօտութիւն ունին, Հոփսիմեանց վարժարանը յուղարկուելու են անոնց խորհրդածութեան: Այս փոքրիկ աղջիկները ես պիտի յուղարկուին. և ուսումնական ժողովը կողմէ անոնց ծնողքը՝ որ մէկ երկու տարի համբերութիւն ընելով, յետ այնորիկ դարձեալ յուղարկեն վանոնք այս աղջիկին դպրատունը. որ յայնժամ կրնան բան մը սովորել. իսկ այժմ բնականապէս հանգարտ նստելու անգամ չեն կրնար:

Հաւաստի, մեծարդոյ հետքը, Հոփսիմեանց դպրոցին այժմեան կացութիւնը համառօտիւ ձեր առջև դրինք, աշակերտութեանց գովելի յատկութիւնները նշանակեցինք. բայց ուսումնական ժողովը կը յուսայ թէ թոյլ պիտի տրուի իրեն յայտնելու նաև մէկ քանի պակասութիւններ, զորս ցաւալի սրտիւ դիտեց անոնց վրայ: Այս պակասութիւններէն գլխաւորը, երբեմն կատարեալ հնազանդութիւն չունենալն է իրենց վարժապետացը և վարժապետութեանցը: Աւելորդ կը համարուի մնացեալ երկու քորդական պակասութիւնները յիշելու. բայց հարկ կը համարուի ծանուցանել թէ ուսումնական ժողովը որոշած է աղբու միջոցներ 'ի գործ դնել թէ վարժապետաց և վարժապետութեանց նկատմամբ և թէ մեծ և պղտիկ առհասարակ ամեն աշակերտութեանց նկատմամբ. որպէսզի բարեկարգութիւնը կատարեալ ըլլայ այս աղջիկին պատուական վարժարանի մէջ:

Քաջայայտ եմք թէ մեր անխնայ և յարատե ջանքը որուն նպատակը հայկազուն օրինորդաց ուսումնական կըթուծիւնը բարոյական կըթուծեանը հետ միատեղ է, այսինքն գիտութիւնը առաքինութեան հետ լծոր:

գեւ. քաջայայտ եմք, կրտսմք, թէ մեր ջանքը յաջողութեամբ պիտի պսակուի 'ի փառս և յօգուտ Ազգին եթէ աշակերտութեան ծնողքը և մասնաւորապէս մայրերը հոգ տանին հարկաւոր խրատներով նախապատրաստել իրենց դստերը և զգուշանալ որ չըլլայ թէ անոնց օրինաւոր պատճառի պակսին դպրոցէն:

Մեք պիտի աշխատենք, յարդոյ հետքը, մեր պարտքը ճշգրտութեամբ կատարելու. և յուսմք թէ աշակերտութեան ծնողքն ալ ջանցաւորութիւն պիտի չընեն իրենց հայրական պարտքը վրայօք. և յայնժամ տարակոյտ չկայ թէ ուսումնական ժողովին ջանքը արդիւնաւոր պիտի ըլլայ այս վարժարանիս ևս առաւել յատկաբանութեանը ըստ ամենայն մասին:

Փոքիշ անուն պատուական լրագրոյն Յունիսի 11 թուոյն մէջ խիստ բանաւոր յօդուած մը կարդացինք. որ բաղու՛մ սիրով և հաճութեամբ ընդունուեցաւ Իզմիրի Հայ հասարակութեանէն:

Հաւաստի այս յօդուածը:

Այս անգամ Արեւելեան Դարը Պ. Նալբանդեանցի Երկու Տող անուն տետրակին դիմ յօդուած մը հրատարակել է: Մեք այժմ տետրակը եւ յօդուածը պարտաւոր կամ գովելոյ միտք չունինք. բայց այս վերջինը կարգաւած ժամանակինս՝ կետ մը մեզի անպատշաճ կերեւեք, որ այս է:

Մեղուն քանի մը շաբաթի մ վեր, ի գարմացումն աշխարհի, ինքզինքին հետ խաղաղած եւ աշխարհի հետ ալ գգաստութեամբ վարուիլ սկսած էր. բայց Արեւելեանին յօդուածին մէջ Մեղունին դիմ ամբաստանութիւններ ու գրգռիչ խօսքեր տեսնելով՝ կը վախնայինք քե այս խօսքերը Մեղունին հին ընթացքը հորդելու հոգով: Իսկ երբ վերջոյիցեալ յօդուածին յաջորդող յօդուածը կարգաւոր Արեւելեանին մէջ, ան առեւ հասկըցանք Մեղունին յանկարծակիս հրաշալի փոփոխութեան պատճառը:

Մեղուն իրեն դիմ Արեւելեանին ըրած համարձակախօսութեանցը ժողովը զխորհրդով՝ եւ ուրիշ կերպիւ վրեժ յոճելոյ միջոց չգտնելով՝ Բ. Դրան պաշտօնէից բողոքել է որ զանի կարկեցնեն: Արդ՝ Արեւելեանը նոյն պաշտօնէից միայն կողմանէ հրապարակելով՝ գացել է պատուէր ընդունել քե 'աշտուհետեւ Մեղունին դիմ 'գեղեկ, խեղ, կամ իշաՄեղուն' եւ այլ ասանց նման վատ անակամներ չտալ: «Ասոր գիշեր է Արեւելեանը. բայց «սա պայմանաւ որ Մեղուն ալ Ազգին ընդհանրութիւն, եւ մանաւանդ մասնաւորապէս յարգելի Կոթիին, եւ պատուաւոր անձանց դիմ «աւերակ, վատ, անգութ, բռնաւոր» եւ այլ ուրիշ անարգական եւ պատուոյ վնաս խօսքեր չընէ: » Այս է եղեր անա Մեղունին գաւառական պատճառը:

Ասիկայ այն Մեղուն է որ ազատութիւնն ու ազատամտութիւնը մարդու չտար, եւ անցեալները Միութեան դիմ նուազեցանք՝ բռնած ընթացքը կը դատաւարտուի: Ենապէս ինչ տարբեր ընթացք բռնեցին Միութեան դիմ, Մեղունին Արեւելեանին դիմ բռնածին: Ենապէս Միութեան խօսքերէն գայրանալով՝ կանաւաւորութեան ձեռամբ լռեցուցին զանի: Մեղուն ալ Արեւելեանին խօսքերն իր պատուոյն անարժան դատելով՝ կը գայրանայ եւ զանի լռեցնելոյ կաշխատի մի եւ նոյն միջոցաւ:

Ուրեմն Մեղուն ինչպէս կրնայ մեղադրել եռապետները Միութեանը խախտելուն համար. երբ ինքն ալ նոյն կիրքն ունի Արեւելեանին դիմ:

Բայց արդեօք Մեղունին պատիւը ազգային վանքի մը բոլոր Միաբանութեան պատիւէն վեր է: Երբոր ինք վանքի մը բոլոր Միաբանները խաղախ, գող եւ մարդասպան կընաւանդէ իր բերրովը, ինչպէս ճանաչուածք ուրեմն՝ որ իւր հասարակ իրմէ ընդունած բռնամարտի (քեպտե եւ քրիստոնէական ոգոյ հակառակ) ըրնամարտը կը պատասխանէ: Արդեօք ասիկա Մեղունին ազատութեանն ու ազատամտութեանը նշանն է:

Մենք կարծեմք քե, ազատութիւնն իրեն՝ միայն ուզող, եւ այլոց ազատութեանը վրայ գայրացող բռնաւորութեան հոգի է երեւցածը. եւ բռնաւորութեան հոգի ցուցանող մեկը՝ ոչ ազատ է եւ ոչ ազատութեան ինչ լինելը գիտէ:

ԱՅՈՒՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՐՈՒԹԻՒՆ

Յաւալի սրտիւ կրտսմեմք որ Կոստանդնուպոլսէն հասած լուրերը, նմանապէս նոյն մայրաքաղաքին ազգային օրագրաց տուած տեղեկութիւնները 'ի մասին Սահմանադրութեան,

նմանապէս որ Փարիզ քաղաքը տակաւին այս նախատական բաւը կը գործածէ Իզմիրի նախկին ազգային հոգաբարձուաց համար:

ամենեւին քաջալերական և գոհացուցիչ չեն:

Օղորանք, գանդաղութիւն և վհատութիւն մը կը տեսնուի, կը դրեն մեզ 'ի Կոստանդնուպոլսոյ, ընդհանրապէս բոլոր ժողովոյ և խորհրդոյ անդամներուն վրայ: Աղջային վարժարանաց կացութիւնը միևնոյնն է. ինչպէս որ էր Սահմանադրութեան յառաջ: Սուրբ Փրկչի հիւանդանոցին վեճակը ոմանք կը դրնեն և ոմանք կը պարտաւեն. հետեւաբար հասարակութիւնը երկբայութեան մէջ է անոր ստորդ կացութեան վրայօք. վասնզի կըլնեն թէ հոգաբարձուաց մէկ մասը հրաժարուելու են և մնացեալները մեծ նեղութիւն կը ընեն այս աղջային հաստատութեանը հոգաւոր համար: Վերջապէս յիշեալ մայրաքաղաքին Հայոց ազգին պարտքը աւելնալով վրայ է և որոշեալ տուրքը վճարող չկայ:

Մայիսի 25ին գումարուած ազգային կեդրոնական ժողովին մէջ, 50 գլխաւոր երեսփոխանք ներկայ չեն գտնուելու անոնց իրենց բացակայութեան բանաւոր պատճառը դրով իմացնելու: Այս երեսփոխանաց շատերը, որոց անունները հրատարակուած են Սահմանադրութեան 14 թուոյն մէջ, իրենց աղքատական դժբախտութեան հանդիսացած են միշտ. ուրեմն ինչէ՛ պատճառը որ չուզէր են ներկայ գտնուիլ յիշեալ ընդհանուր ժողովին մէջ:

Մեք կարծեմք թէ Կոստանդնուպոլսոյ ազգային այս դժբաղդ վեճակին պատճառը նոյն մայրաքաղաքին հայերէն լրագրաց ոմանց անարժան և յանգուգն խօսքերն են ընդգէմ ազգային բարեբարաց, երեւելեաց և կղերին: Յիշեալ լրագրութիւնները համարձակապէս և անպատիժ նախատեսքին և թշնամանքին ազգին հարուստները, բարեբարները, երեւելիները և ազգային կղերը: Այսու ամենայնիւ քաղաքական ժողովը լուր և չէզոք կեցաւ, և իւր լուրութեամբ ևս առաւել քաջալերեց լրագրութեանց յանգուգնութիւնը: Վասնորոյ ազգային երեւելիները, ինչպէս կը տեսնուի, իրաւամբ վշտանալով այս աղքատական ցաւալի պարտաւորաց վրայօք՝ իրենց դործակցութիւնը զրկանք քաղաքական ժողովին և ուրիշ խորհուրդներէն, և այս բանէն յառաջ եկաւ դժբաղդ կացութիւնը, որուն մէջ կը գտնուի այժմ ազգային Սահմանադրութիւնը 'ի Կոստանդնուպոլսոյ:

Սիրելի է մեզ յուսալ թէ այս ցաւալի վեճակը, որուն բարեբաղդ փոփոխութեանը հաջմար կաղաչեմք զՍտուած, օգտակար խրատ մը պիտի ըլլայ վասն աղքատային թէ՛ ազգային լրագրագետաց ոմանց և թէ՛ քաղաքական ժողովին:

Բարեբաղդ կը համարուի զմեզ որ մի և նոյն ցաւալի լուրերը չունինք հրատարակելու 'ի մալին սահմանադրական գործոց Իզմիրի մէջ: Այլ ընդհակառակն ուրախ սրտիւ կը ծանուցանեմք թէ ազգային Սահմանադրութիւնը առայժմ հանգարտութեամբ և բարեկարգութեամբ կը շարունակէ իւր յառաջագէմ ընթացքը: Քաղաքական ժողովը, թէպէտ իւր սահմանադրական իշխանութեան զօրութիւնը քաջ կը ճանաչէ բայց և այնպէս միշտ քաղցրութեամբ և խոհմութեամբ կը վարուի միւս խորհրդոց հետ, թոյլ չտար ամենեւին որ իւր կառավարութեան չընաւանդէ մէջ հրատարակուած Հայ լրագրութիւնները ազատութեան չափը անցնեն. և պատրաստ է պատժել տալու զանոնք սահմանադրապէս, եթէ աղքատական և համեստութեան դէմ բան մը գրելու ըլլան: Այս, անկարելի է որ Իզմիրի մէջ հայերէն լրագրի մի Կոստանդնուպոլսոյ Մեղունի պէս լրագրութիւններ հրատարակէ և անպատիժ կամ կենդանի մնայ 'ի գայթակղութիւն ընթերցողաց և 'ի նախատես լրագրին:

Կաղաչեմք զՍտուած որ այս բարեկարգ ընթացքը անվնաս պահպանուի միշտ և հանապաղ յօգուտ զմիւսնացի Հայ ժողովուրդեան և 'ի պատիւ ազգային Սահմանադրութեան:

Կոստանդնուպոլսոյ Փոքիշ Պոլիս օրագրոյն յունիսի 6 թուոյն մէջ ըստ նոր տուածի, հետեւեալ յօդուածը հրատարակուած է:

«Համակրութեամբ ուշադրութիւն մատուցելու միշտ Հայոց ազգին ընկերական յառաջադրանքն է:

